ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

5 մարտի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

28
(3059)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՆԱԽԱՐԱՐ ԱՐՓԻՆԵ ՍԱՐԳՍՅԱՆԸ ՉԱԽՈՂԵԼ Է ԱՇԽԱՏԱՆՔԸ

ՀՀ ներքին գործերի նախարարության գործունեության շուրջ լուրջ դժգոհություններ են հասունացել: «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում մի շարք դատավորներ եւ փաստաբաններ հայտնեցին, որ իրենց համբերության բաժակը լցվել է, եւ իրենք պատրաստվում են բողոքը հասցնել ընդհուպ մինչեւ Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

Իսկ ինչն է խնդիրը: Բանն այն է, որ կալանավորներին ուղեկցող ոստիկանության խմբերը չեն կարողանում մի շարք քրեական վարույթներով կալանավորների բերել դատարաններ, ու դատական նիստերը հազվադեպ են կայանում: Այսինքն՝ փաստաբանները գնում են դատարան, դատավորը պատրաստակամ է նիստ գումարել, սակայն կալանավորներին դատարան չեն բերում:

Այս իրավիճակը զայրացրել է փաստաբաններից շատերին, ու չի բացառվում, որ անգամ կալանավորների իրավունքները ոտնահարելու գանգատներով դիմում ուղարկվի Մարդու իրավունքների եվրոպական դատարան:

ArmLur.am-ը հայտնել էր, որ ըստ ՆԳՆ-ի պաշտոնական տվյալների՝ 2025 թվականի հունվար ամսվա ընթացքում վարույթ իրականացնող մարմինների կողմից ստացվել է 1601 հայտ ազատությունից զրկված 1757 անձանց ուղեկցելու վերաբերյալ, որից ՆԳՆ ոստիկանության համայնքային ոստիկանության գլխավոր վարչության ուղեկցող ստորաբաժանումների գերծանրաբեռնվածության հետեւանքով հնարավոր չի եղել իրականացնել 438 հայտի պահանջները՝ ազատությունից զրկված 477 անձանց վերաբերյալ:

Այսինքն՝ օրուգիշեր բարեփոխումներից խոսող ՆԳ նախարար Արփինե Սարգսյանը 477 կալանավորի իրավունք է ոտնահարել:



Հայաստանի իրավապահ համակարգը 2023 թվականից մինչ օրս կոռուպցիայի դեմ պայքարի շոուի շրջանակում թիրախավորել է բացառապես Երեւանի քաղաքապետարանը՝ ստեղծելով այն տպավորությունը, որ կոռուպցիայի դեմ պայքարը սահմանափակվում է միայն քաղաքային իշխանությունների հետապնդմամբ: Քաղաքապետարանից մեզ փոխանցում են, որ ներսում խորացող համոզմունք կա՝ ձերբակալությունները կատարվում են առանց հիմնավորումների, իսկ քաղաքապետ Տիգրան Ավինյանը դրանք դիտարկում է քաղաքական ուղղորդումների համատեքստում: Քաղաքապետարանի կոմունալի պետի ձերբակալությունը, որ տեղի ունեցավ երեկ, ըստ աղբյուրների՝ համարվել է վերջին կաթիլը: Քաղաքային իշխանությունների ներսում աճում է դժգոհություն, եւ շշուկներ են շրջանառվում, որ քաղաքապետը, ամենայն հավանականությամբ, որոշում կկայացնի հակահարձակման անցնելու՝ քաղաքական խաղերի մասնակիցներին հասցնելով հուժկու հակահարված: Ավելին, տեղեկացվում է, որ քաղաքապետը նախորդ օրը հրահանգել է աշխատակազմին, որ իրավապահ համակարգի ցանկացած ներկայացուցչի կողմից արված յուրաքանչյուր՝անգամ ամենաչնչին խնդրանքը զեկուցեն բացառապես իրեն՝կազմելով մանրակրկիտ ցուցակ: Սա կարող է վկայել այն մասին, որ քաղաքապետարանը պատրաստվում է պաշտպանողականից անցնել ավելի ակտիվ գործողությունների: Հիշեցնենք, որ 2023 թվականից սկսած՝ քրեական գործեր են հարուցվել Երեւանի երկու փոխքաղաքապետերի, մի քանի վարչության պետերի, ինչպես նաեւ Արաբկիր վարչական շրջանի ղեկավարի նկատմամբ: Սակայն վարույթների մեծ մասը գտնվում է անորոշ՝սառած վիճակում, մինչդեռ այդ գործերով անցնող անձանց շարունակում են ամեն գնով պահել կալանքի տակ: Այս զարգացումները Երեւանի քաղաքապետարանում գնահատվում են ոչ թե որպես իրավական գործընթացներ, այլ որպես քաղաքական ճնշման միջոց, որը կարող է փոխել քաղաքապետարանի հետագա գործողությունների տրամաբանությունը:

Երեկ ՀՀ Ազգային ժողովում ԱԺ պատգամավոր Թագուհի Թովմասյանը հետաքրքրվեց ՀՀ Կառավարության միջազգային հարցերով ներկայացուցիչ Եղիշե Կիրակոսյանից, թե ինչ է անում ՀՀ Կառավարությունը հայ ռազմագերիների եւ պատանդ պահվող քաղաքացիական այլ անձանց խոշտանգման մասով՝հիշատակելով, որ Ռուբեն Վարդանյանի դեմքին կապտուկներ կան, Բակո Սահակյանի ատամնաշարի առջեւի հատվածը չկա: Այսինքն՝հայ գերիները Բաքվի բանտերում խոշտանգվում են: ՀՀ Կառավարության միջազգային հարցերով ներկայացուցիչը ԱԺ ամբիոնից հայտարարեց, թե «Ունենք առանձին ամբողջական գանգատը, որի գրավոր փուլը ավարտվել է նախորդ տարվա ավարտին՝ դեկտեմբերին: Ունենք կիրառված միջանկյալ միջոցներ Ադրբեջանի նկատմամբ, որի շրջանակներում պարբերաբար ստանում ենք տեղեկություն պահվող անձանց վիճակի մասին, առողջականի, պահման պայմանների մասին: Վերջին տվյալները ստացել ենք փետրվարի սկզբին: Դրանից հետո, բնականաբար, մենք հետեւում ենք մամուլում շրջանառվող որոշ տեսանյութերի, նկարների, ինչը Դուք նշեցիք. դրանք ուշադրությամբ ուսումնասիրվում են, ուշադրության կենտրոնում են»:

Հակակոռուպցիոն կոմիտեում կյանքը կանգ է առել: «Ժողովուրդ» օրաթերթին հասած լուրերի համաձայն, չնայած հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ժամանակավոր պաշտոնակատարը կա՝ Էդուարդ Հակոբյանը, սակայն կոմիտեում շունչները պահած սպասում են նոր նախագահի ընտրվելուն, որ կարողանան առավել հնչեղ քրեական գործերով որոշումներ կայացնեն: Հակակոռուպցիոն կոմիտեից, ի պատասխան այս իրավիճակի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթի հարցի, փոխանցեցին, որ այդ հանգամանքը չի կարող ազդեցություն ունենալ իրենց աշխատանքի որակի վրա, եւ օրենքով նախատեսված կարգով կատարվում են մինչդատական վարույթներով բոլոր անհրաժեշտ քննությունները: Հավելենք, որ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուները արդեն կան ու սպասում են Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից տրվելիք թեկնածուների բարեվարքության մասին եզրակացությանը, որը երեկվա դրությամբ դեռ մրցութային հանձնաժողովին չէր տրամադրվել: Հիշեցնենք, որ Նիկոլ Փաշինյանի ուղարկած «գիշերային ՍՄՍ»-ից հետո ՀԿ նախագահ Սասուն Խաչատրյանը «ինքնակամ» դիմում գրեց աշխատանքից ազատման ու հեռացավ. եւ շուրջ 4 ամիս է հակակոռուպցիոն կոմիտեն նախագահ չունի:

ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԿԱՌՈՒՅՑՆԵՐԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՉԻ ԸՆԴՈՒՆՈՒՄ

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է «Ապրելու երկիր» կուսակցության անդամ Արտավազդ Ալավերդյանի հետ: Նա միացել է «Ապրելու երկիր» կուսակցության նախագահ Մանե Թանդիլյանի հացադուլին:

-Պարոն Ալավերդյան, Դուք նույնպես միացել եք Մանե Թանդիլյանի հացադուլին: Ձեր կարծիքով՝ այս գործողությունները ի՞նչ արդյունք կտան: Ի՞նչ սպասելիքներ ունեք:

-Սա մեր զորակցությունն ու աջակցությունն է Ռուբեն Վարդանյանին եւ մեր բոլոր գերիներին՝ Բակո Սահակյանին, Արկադի Ղուկասյանին եւ մյուսներին: Նախ՝ պայքարի այս ձեւով մենք աջակցում ենք իրեն եւ հորդորում ու խնդրում, ինչու չէ նաեւ ակնկալում, որ տեսնելով կատարվողը՝ գոնե դուրս կգա հացադուլից, որովհետեւ իր կյանքին վտանգ է սպառնում, իր առողջական վիճակը ծանր է: Մեր ակնկալիքը մեր գերիների հարցը բարձրաձայնելն է եւ հարցին լուծում տալը:

-Որքա՞ն է շարունակվելու հացադուլը:

-Ես չեմ կարող հիմա ասել, թե որքան կշարունակվի, որոշված ժամկետ չկա: Դա կախված է նրանից, թե ինչ գործողություններ, արձագանքներ կլինեն ժողովրդի, հանրության կողմից: Մենք նաեւ միջազգային հանրությանն ենք նամակներ ուղարկում:

-Իսկ Ձեզ համար հասկանալի՞ է միջազգային հանրության լռության պատճառը: Ինչո՞ւ են լռում միջազգային կառույցները: Նրանք մշտապես խոսում են մարդասիրությունից, մարդու իրավունքների պաշտպանությունից, իսկ երբ լուսանկարներ են տարածվում, որ Բաքվում խոշտանգվում են մարդիկ, ինչո՞ւ են այդ կառույցները լռում:

-Ի սկզբանե արցախահայության հայաթափման մասին անդրադարձը ու Արցախի հետ կապված դիրքորոշումը միջազգային կառույցների կողմից, անհասկանալի չասեմ, բայց անընդունելի էր ինձ համար: Երբ արդեն հայաթափումը տեղի ունեցավ, ու հայերը դուրս էին գալիս Արցախից, մեր առաջնորդների կալանավորումն արդեն իսկ աղաղակում էր այն մասին, որ մարդասիրական ոչ մի սկզբունք էլ չի պահպանվում, եւ միջազգային ոչ մի նորմ չի պաշտպանվում: Էլ ուր մնաց՝ խոսենք դատավարության մասին, այն կտտանքների, որոնց ենթարկվում են մեր տղաները Բաքվում: Ամբողջ հայ ազգն է ենթարկվում այդ խոշտանգումներին, որովհետեւ այդ դատավարությունը տեսնելով, դրան հետեւելով՝ բոլորիս համար պարզ է դառնում, որ այստեղ անձերի հարց չէ, այլ քննարկվում, քննադատվում եւ դատվում է Հայաստանն ու հայը առհասարակ: Ես՝որպես հայ, ինձ անվտանգ չեմ զգում, առավել եւս անվտանգ չեմ զգալու, երբ Հայաստանից ոտքս դնեմ դուրս: Սա կարող է կատարվել ցանկացածի հետ: Ալիեւյան ռեժիմը կարող է ինչ-որ շինծու մեղադրանքներով գործ հարուցած լինել ցանկացած հայի նկատմամբ, ով սատարել է Արցախին: Նրանք կարող են նույն կերպ ցանկացածին առեւանգել, տանել:

Հիշեցնենք, որ «Ապրելու երկիր» կուսակցության նախագահ Մանե Թանդիլյանը արդեն 5 օր է հացադուլ է սկսել Ազատության հրապարակում: Նա այս քայլով իր աջակցությունն է հայտնում Ռուբեն Վարդանյանին եւ միջազգային կառույցների ուշադրությունն է հրավիրում նրա նկատմամբ արված խոշտանգումներին: Նշենք, որ Արցախի պետնախարար Ռուբեն Վարդանյանը, որը կտտանքների է ենթարկվում ադրբեջանական բանտում, արդեն 16 օր է հացադուլի մեջ է:

Զրուցեց ՔՐԻՍՏԻՆԱ ՄՈՒՇԵՂՅԱՆԸ

ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹՅՈՒՆ-110

«ՏԱՐԵԼԻՑԸ ԽԱՅՏԱՌԱԿ ՎԻՃԱԿՈՒՄ ԵՆՔ ԴԻՄԱՎՈՐՈՒՄ», ԴԵՄՈՅԱՆ

ԳԱԱ Ցեղասպանության թանգարան-ինստիտուտի նախկին տնօրեն, ղեկավար Հայկ Դեմոյանը գրում է.

«Հայոց ցեղասպանության 110-րդ տարելիցը դիմավորում ենք ամենախայտառակ ու անկումային իրավիճակում. Հայոց ցեղասպանության պատմական փաստի ժխտում ՀՀ իշխանությունների կողմից, սրբադասված նահատակների հիշատակի պղծում, եկեղեցու լիակատար լռություն, մտավորականության մեծամասնության ու հատկապես պատմաբանների համագործակցություն ազգային հիշողությունն ու ժառանգությունը արժեզրկող ու կեղծող ապիկարների հետ:

Ակնհայտ է նաեւ սփյուռքյան որոշ ինտելեկտուալ շրջանակների բացահայտ հովանավորչությունը ՀՀ-ում անօրինական ճանապարհով իշխանությունը զավթած օտարահաճ գործակալների խմբի հանդեպ: Մի խոսքով, ազգային ողբերգության մի նոր արար, որին մասնակցում են բոլորը՝ իրենց ունակությունների ու կարողությունների ներածին չափով: Ու բոլորը հույս են տածում, որ իրենց լռությունն ու հակապետական, հակազգային գործերն ու վարքը շատ արագ մոռացվելու են ու չեն հիշվելու.... Սին հույսեր ու պատրանքներ. ամեն ինչ արձանագրվում է՝ հաջորդ սերունդներին փոխանցելու համար:

Մոտ օրերս կիրապարակեմ մինչ օրս չհանրայնացված փաստեր՝ Հայոց ցեղասպանության թանգարանում տեղ գտած քստմնելի մի շարք դրվագներով ու կտեսնեք, թե հանրության շրջանում նկատելի ու ճանաչելի դառնալու անհույս ճիգեր գործադրող որոշ անձանց ու իրենց հովանավորների իրական ինքնությունները: Սա պարտադիր է, համբերեք մի քանի օր:

Հայոց ցեղասպանության հիշողությունն առաջին հերթին անվտանգության ու ինքնապահպանության հարց է, այլ ոչ թե սահմանային առեւտրի ու այլընտրանքային արտահանում ապահովելու խնդիր: Մոռանում ես դա, կամ գիտակցաբար մոռացության ես տալիս այդ հիշողությունը, ուրեմն դատապարտված ես վերապրելու նույնը: Սա է պարզ բանաձեւումը: Համատարած ապատիան ու ինքնապահպանության կոլեկտիվ բնազդի բթացումը, որը հովանավորվում է իշխանությունների ու նրանցից սնվող ու վճարվող քարոզիչների կողմից, թիրախավորում են հենց այդ ինքնապահպանության բնազդը:

Սկսելու եմ Հայոց ցեղասպանության թեմայի վերաբերյալ կարճ պատմությունների հրապարակումը, որոնք հանրային հասանելի ձեւաչափով կօգնեն հասկանալ տեղի ունեցած ողբերգության իրական ծավալներն ու հետեւանքները: Միաժամանակ հորդորում եմ բոլորիդ միանալ հիշողության ու ոգեկոչման մի կարեւոր արարողության. մինչ ապրիլի 24-ը որպես հարգանքի ու հիշատակի տուրք, կարդացեք վերապրողի հինգ հուշագրություն: Ընդամենը հինգ ճակատագիր, որը կօգնի մեզ հասկանալ ու վերարժեւորել մարդկային կյանքն ու մաքառումի սխրանքը, կօգնի մեզ հասկանալու իրական արժեքներն ու դուրս գալ նոր աղետ նախանշող համազգային թմբիրից:

Վստահեցնում եմ Ձեզ, որ նման հուշագրությունների ընթերցումից հետո կփոխվի Ձեր աշխարհընկալումն ու արժեքային համակարգը: Իմ նպատակը սոսկ ընթերցանությունը չէ: Այսպիսի գրքերի ընթերցումը կնպաստի այն ընկալման ամրապնդմանը, որ լինելով լիակատար ոչնչացման դատապարտված տեսակ, իրավունք չունենք անհանդուրժողականություն ու ատելություն տածել միմյանց նկատմամբ... Ուղղակի իրավունք չունենք...

Իսկ դա, հիշե՛ք, այս պահին տարվող պետական քաղաքականության կարեւոր մասն է, քանզի ատելության ու անհանդուրժողականության սերմանումը իշխանություն պահելու լավագույն մեթոդներից է...»:

ՀԱՍՏԱՏԵԼ Է ԻՐ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Բաքվում ընթացող շինծու դատավարության ընթացքում Արցախի ՊԲ նախկին հրամանատար, գեներալ-լեյտենանտ Լեւոն Մնացականյանը հաստատել է իր մասնակցությունն Արցախի ազատագրական պայքարին, նշել՝ որտեղ էլ չի մասնակցել, եթե անհրաժեշտությունը լիներ, կմասնակցեր:

Հիշեցնենք, որ ավելի վաղ Բաքվում ընթացող շինծու դատավարության ժամանակ Արցախի երկրորդ նախագահ Արկադի Ղուկասյանը նշել է, որ Հայաստանի ներգրավվածությունը 44-օրյա պատերազմում պայմանավորված էր Արցախի անվտանգության երաշխավոր լինելու հանգամանքով, ինչը իրավական տեսանկյունից համարվում է լեգիտիմ:

ՎԱՀԱԳՆ ԽԱՉԱՏՈՒՐՅԱՆԸ ԱՅՑԵԼԵԼ Է ՊԵՐՈՒ

Լատինական Ամերիկա կատարած աշխատանքային այցի շրջանակներում Հանրապետության նախագահ Վահագն Խաչատուրյանը Լիմայում հանդիպում է ունեցել Պերուի Հանրապետության նախագահ Դինա Բուլուարտեի հետ:

Ողջունելով նախագահիին՝ Դինա Բուլուարտեն առանձնահատուկ շեշտել է, որ առաջին անգամ պատմության մեջ Պերու է այցելում Հայաստանի նախագահը, ինչը վկայում է երկու երկրների կողմից բարեկամության ու փոխգործակցության ամրապնդման ձգտման մասին, եւ որը նոր խթան կհաղորդի երկու հնագույն քաղաքակրթություններ ներկայացնող պետությունների միջեւ հարաբերությունների սերտացման եւ ընդլայնման համար:

Նախագահը շնորհակալություն է հայտնել ջերմ ընդունելության համար եւ կարեւորել բարձրաստիճան փոխայցելությունները երկու երկրների միջեւ համատեղ հետաքրքրություն ներկայացնող ոլորտներում համագործակցության ընդհանուր եզրեր գտնելու տեսանկյունից:

ԿՈՐՈՇԻ ԹՐԱՄՓԸ

Վաշինգտոնի կողմից Կիեւին ռազմական օգնությունը վերսկսելու հնարավորության մասին որոշումը պատկանում է ԱՄՆ նախագահ Դոնալդ Թրամփին: Այս մասին Fox News-ին տված հարցազրույցում ասել է Սպիտակ տան մամուլի քարտուղար Քերոլայն Լեւիթը:

«Դա նախագահ Թրամփի որոշելիքն է», - ասել է նա՝ի պատասխան հաղորդավարի այն հարցին, թե արդյոք Վլադիմիր Զելենսկիի զանգը կարող է հանգեցնել ԱՄՆ ռազմական օգնության վերսկսմանը:

Լեւիթն ավելացրել է, որ Զելենսկին «արծաթյա սկուտեղի վրա է հանձնվել» հանքանյութերի մասին համաձայնագրով եւ նշել, որ դա կարող է լինել ոչ միայն տնտեսական համաձայնագիր, այլեւ փրկօղակ Զելենսկիի եւ նրա երկրի համար», - ասել է նա:

Մարտի 3-ին Reuters-ը, վկայակոչելով Սպիտակ տան ներկայացուցչին, հայտնել է, որ Թրամփը հրահանգել է դադարեցնել Կիեւին ռազմական օգնության բոլոր մատակարարումները:

ԱՌԱՋԱՐԿԵԼ Է ԹՈՂՆԵԼ ՊԱՇՏՈՆԸ

Ամերիկացի միլիարդատեր Իլոն Մասկը, որը վերահսկում է ԱՄՆ Կառավարության արդյունավետության վարչությունը (DOGE), կրկին թիրախավորել է Ուկրաինայի նախագահ Վլադիմիր Զելենսկիին: Նա Ուկրաինայի ղեկավարին առաջարկել է հեռանալ իշխանությունից: «Որքան էլ տհաճ լինի, Զելենսկիին պետք է ինչ-որ համաներում առաջարկել չեզոք երկրում՝ Ուկրաինայում ժողովրդավարության խաղաղ վերադարձման դիմաց», - գրել է Մասկը X-ի իր միկրոբլոգում: Մեկ այլ գրառման մեջ էլ նա Ուկրաինայի նախագահին մեղադրել է Ռուսաստանի սանձազերծած պատերազմը երկարաձգելու համար: «Զելենսկին հավերժ պատերազմ է ցանկանում, որը չարիք է», - գրել է Մասկը:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ԱԺ-ում քննարկվել է Վարչական իրավախախտումների վերաբերյալ օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին նախագիծը, որով առաջարկվում է տրանսպորտային միջոց վարելու իրավունք ունեցող անձին մեկ տարվա համար հատկացված 9 տուգանային միավորի փոխարեն հաշվարկել 13 տուգանային միավոր:

Հիմնական զեկուցող ՔՊ խմբակցության պատգամավոր Արմեն Խաչատրյանն ասաց, որ 100-ից ավելի ճանապարհային երթևեկության կանոնների իրավախախտումներ կան, միայն 28 իրավախախտումների դեպքերով են հանվում տուգանային միավորներ:

Նա հայտնեց, որ այս փոփոխությամբ 7 իրավախախտումների մասով տուգանային միավորներն ավելացվել են, որպեսզի համարժեքությունը պահեն, 20 իրավախախտումների դեպքում տուգանային միավորները նույնն են մնացել:

Խաչատրյանը թվարկեց 7 իրավախախտումները, որոնց դեպքում բալերը բարձրացվել են՝

Ապակիների լուսաթափանցելիության կանոնների խախտում. եթե խախտումը մեկ անգամ արձանագրվելուց հետո կրկին արձանագրվում է, ապա վարորդի բալային համակարգից կհանվի 3 միավոր:

Ամրագոտիները չամրակապելու դեպքում 1 տուգանային միավորը դառնում է 1,5 միավոր:

Հեռախոսից օգտվելու դեպքում 1 տուգանային միավորը դառնում է 1,5 միավոր:

Բաժանարար գոտի հատելու դեպքում 2 տուգանային միավորը դառնում է 3 միավոր:

Հանդիպակաց երթևեկելի գոտի դուրս գալու դեպքում 3 տուգանային միավորը դառնում է 4 միավոր:

Ոչ սթափ վիճակում ավտոմեքենա վարելու դեպքում 4 տուգանային միավորը դառնում է 5 միավոր:

Մեքենա վարելիս ծխախոտ օգտագործելու դեպքում 1,5 տուգանային միավորը դառնում է 2 միավոր:

«Մնացած 20 իրավախախտումներով որեւէ փոփոխություն չի արվել: Վարորդների հետ հանդիպումից եւ քննարկումից հետո երկրորդ շարքում կանգնելու դեպքում 0,5 բալը մենք փոխարինեցինք 0,25 բալով, եւ անգամ այս մասով որեւէ փոփոխություն չենք արել», - ասաց պատգամավորը:

Նախագիծը երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ ընդունվելու դեպքում ուժի մեջ կմտնի մայիսի 1-ից:

FREEDOM HOUSE-Ի ԶԵԿՈՒՅՑԸ

«ՀԱՅԱՍՏԱՆԸ ՄԱՍԱՄԲ ԱԶԱՏ ԵՐԿԻՐ Է»

Freedom House միջազգային հեղինակավոր կազմակերպությունն հրապարակել է «Ազատությունն աշխարհում – 2025» զեկույցը՝ «Դժվարին ոլորտ իրավունքների համար» վերնագրությամբ: Այն գնահատում է աշխարհում քաղաքական իրավունքների եւ քաղաքացիական ազատությունների վիճակը:

Այս տարվա զեկույցում արձանագրվել է, որ 60 երկրում քաղաքական իրավունքների եւ քաղաքացիական ազատությունների առումով անկում է գրանցվել, իսկ բարելավումներ արձանագրվել են միայն 34 երկրներում:

Իրավապաշտպան կազմակերպության տարեկան զեկույցի համաձայն՝ համաշխարհային ազատությունը 19-րդ տարին անընդմեջ անկում է ապրում, իսկ այնտեղ, որտեղ արձանագրվել է ժողովրդավարության հետընթաց, իրավունքների եւ ազատությունների դեգրադացման հիմնական գործոններն են բռնությունը եւ քաղաքական հակառակորդների հանդեպ ճնշումներն ընտրությունների ժամանակ, շարունակվող զինված հակամարտություններն ու ավտորիտար գործելակերպի տարածումը:

«Ադրբեջանից եւ Ալժիրից մինչեւ Ռուսաստան ու Ռուանդա ավտորիտար իշխանություններն իրենց քաղաքական հակառակորդներին ձերբակալում, բանտարկում կամ հեղինակազրկում են՝ [իրենց] պարտության նույնիսկ նվազագույն հավանականությունը բացառելու համար»,- գրել է Freedom House-ը:

Ոչ ազատ համարվող 67 երկրներից եւ տարածքներից 17-ն ունեն քաղաքական իրավունքների եւ քաղաքացիական ազատությունների ամենավատ միավորները: Դրանց թվում են Աֆղանստանը, Ադրբեջանը, Բելառուսը, Սիրիան, Թուրքմենստանը եւ այլ երկրներ, ինչպես նաեւ տարածքներ, ներառյալ Արեւմտյան Սահարան, Գազայի հատվածը, Տիբեթը եւ Ռուսաստանի օկուպացիայի ներքո գտնվող Ուկրաինայի տարածքները:

Freedom House-ի համաձայն՝ նախորդ 19 տարիների ընթացքում միավորների ամենամեծ անկումը գրանցվել է Սալվադորում, Սերբիայում եւ Վենեսուելայում, որտեղ ղեկավարների կողմից ժողովրդավարական ինստիտուտների վերացումը արմատավորել է ավտորիտար կառավարման ձեւ:

2005 թվականից ի վեր մեծ անկումներ ունեցած այլ երկրներից են Կենտրոնական Աֆրիկյան Հանրապետությունը, Հայիթին եւ Մալին, «որտեղ բռնությունն ու անապահովությունը երկար ժամանակ խոչընդոտել են մարդկանց՝ խաղաղ ապրելուն եւ իրենց հիմնարար իրավունքներին տեր կանգնելուն»:

Միջազգային կազմակերպության պնդմամբ՝ չնայած ազատության շարունակական գլոբալ անկմանը, մի շարք երկրներում արձանագրվել են դրական փոփոխություններ եւ բարեփոխումներ իրականացնելու միտում՝ ժողովրդավարության ու ազատության զարգացման նպատակով:

Որպես «լուսավոր կետեր» Freedom House-ն առանձնացրել է քաղաքական փոփոխությունները Բանգլադեշում, որոնք երեւան եկան, սակայն, ոչ թե ընտրությունների, այլ բողոքի զանգվածային ցույցերի արդյունքում, Շրի Լանկայում՝ նորընտիր նախագահ Անուրա Կումարա Դիսանայակեի նախաձեռնած բարեփոխումները, սահմանադրական փոփոխությունները Սենեգալում եւ Բոտսվանայում:

Ըստ զեկույցի՝ «միայն կայուն եւ համակարգված գործողությունները կարող են հակադարձել գլոբալ ազատության գրեթե երկու տասնամյակ տեւող անկումը ու ապահովել, որ ավելի շատ երկրներ վայելեն անվտանգություն, բարգավաճում եւ ժողովրդավարական կառավարման առավելությունները»:

Շարունակությունը՝ ArmLur.am կայքում

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԻՆՉՈՒ ԷՐ ՀԱՅՏԱՐԱՐՎԵԼ «ԶԳՈՆՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՈՒՄ»

Բաղանիս-Ոսկեպար ավտոմայրուղում խառնաշփոթ իրավիճակ է եղել եւ իրավապահները ուշագրավ բացահայտում են արել:

ArmLur.am-ին հայտնի դարձավ, որ Գոռ Նիկոյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2025 թվականի փետրվարի 19-ին՝ ժամը 17:10-ի սահմաններում, «Լեքսուս» մակնիշի 67 VL 777 համարանիշի ավտոմեքենայով Դավիթ Հովսեփյանի եւ Նորիկ Մանուկյանի հետ Վրաստանի Հանրապետությունից Երեւան քաղաք վերադառնալու ճանապարհին՝ Տավուշի մարզի Բաղանիս-Ոսկեպար ավտոմայրուղու միջնամասում՝ Հայաստանի եւ Ադրբեջանի Հանրապետությունների սահմանապահ զորքերի կողմից վերահսկվող բաժանարար գծից մոտ 270 մետր հեռավորության վրա, Նորիկ Մանուկյանի կողմից, վերջինիս պատկանող 9 մմ տրամաչափի ազդանշանային ատրճանակից երկու կրակոց է արձակել՝ թույլ տալով անհարկի խախտել պետական սահմանին տիրող լռությունը եւ պետական սահմանի պահպանություն իրականացնող անձանց անդորրը, ինչպես նաեւ խոչընդոտելով ՀՀ ազգային անվտանգության ծառայության սահմանապահ զորքերի «Տավուշ» առանձին սահմանապահ պարետատան բնականոն գործունեությունը, այն է՝ անձնակազմին հայտարարվել է «զգոնության բարձրացում», որի հետեւանքով նույն պարետատան «Ոսկեպար» ուղեկալում ծառայություն իրականացնող սահմանապահ վերակարգը շեղվել է բուն ծառայությունից, պահպանության ներքո գտնվող սահմանային տեղամասի պահպանությունը թուլացել է եւ նշված հատվածի պահպանության համար նախատեսված ուժերն ու միջոցները ծառայեցվել են այլ ուղղությամբ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ԿՏՐԱՄԱԴՐԵՆ ՀԱՅԱՍՏԱՆԻՆ

Եվրամիությունը դիտարկում է Հայաստանին եւս 10 միլիոն եվրոյի ոչ հարձակողական օժանդակության տրամադրումը Եվրոպական խաղաղության հիմնադրամից, որի նպատակն է աջակցել դաշնակիցների պաշտպանությանը: Ինչպես հաղորդում են «Ազատության» Բրյուսելի աղբյուրները, Եվրամիության արտաքին հարաբերությունների եւ անվտանգության հարցերով բարձր ներկայացուցիչ Կայա Կալլասն այդ մասին առաջարկը ներկայացրել է ԵՄ խորհրդին, որն էլ պետք է այն քննարկի առաջիկա շաբաթներին: Քննարկման կոնկրետ օրը, սակայն, դեռ հստակ չէ:

Առաջարկն ուժի մեջ կմտնի, եթե հավանություն տան Միության անդամ բոլոր 27 երկրները: Անցած տարի, օրինակ, Հունգարիան արգելափակել էր այս օգնության տրամադրումը՝ պահանջելով, որ ծրագրում նաեւ Ադրբեջանը ներառվի: Շաբաթներ շարունակված դռնփակ բանակցություններից հետո եվրոպացի դիվանագետներին այն ժամանակ հաջողվել էր հաղթահարել Բուդապեշտի դիմակայությունը:

Թե ինչ դիրքորոշում ունեն այս հարցի վերաբերյալ Բուդապեշտն ու մյուս անդամ երկրները հիմա, հստակ չէ:

Հայաստանն անցած տարի առաջին անգամ 10 միլիոն եվրո ստացավ Եվրամիության Խաղաղության հիմնադրամից:

Եվրամիության Խաղաղության հիմնադրամը ստեղծվել է 2021 թվականին՝ աշխարհում հակամարտությունները կանխելու եւ կարիքավոր երկրներին ոչ մահաբեր զինատեսակներ մատակարարելու համար:

ՈՎ ԿԴԱՌՆԱ ՀԱԿԱԿՈՌՈՒՊՑԻՈՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀ

ԱՌԱՋԻԿԱՅՈՒՄ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ՕՐ ԿՆՇԱՆԱԿՎԻ

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովը Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների բարեվարքության եզրակացությունը ուղարկել է մրցութային հանձնաժողով: Ասել է թե՝ առաջիկայում կնշանակվի Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության օրը:

«Ժողովուրդ» օրաթերթը գրել էր, որ Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովն արդեն ավարտական փուլին է հասել Հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի թեկնածուների բարեվարքության եզրակացությունների հարցում: Այս պահին հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի պաշտոնում առաջադրված թեկնածուները հինգն են՝ փաստաբան Կարեն Բատիկյանը, Սերժ Սարգսյանի դեմ հարուցված քրեական գործով քննիչ Արտաշես Մաիլյանը, քննչական կոմիտեի նախագահի տեղակալ Արթուր Նահապետյանը, Վարչապետի աշխատակազմի տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի ղեկավար Պետրոս Մարտիրոսյանը եւ Գեւորգ Քոչարյանը, որը Գլխավոր դատախազության՝ ապօրինի ծագում ունեցող գույքի բռնագանձման գործերով դատախազ է եւ ներգրավված է ապօրինի գույքի բռնագանձման վերաբերյալ մի շարք աղմկահարույց գործերով:

Նկատենք, որ հակակոռուպցիոն կոմիտեի նախագահի ընտրության համար երկրորդ անգամ է անցկացվում մրցույթ, քանի որ առաջին մրցույթում միակ թեկնածու Ռաֆայել Երիցյանը չհաղթահարեց մրցույթի պահանջված միավորները: Նշենք, որ մինչեւ Կառավարության կողմից նշանակվելուն հասնելը, Կոմիտեի նախագահի թեկնածուն պետք է նախ մրցութային հանձնաժողովում հավաքի անցողիկ միավորներ, ապա դրանից հետո վարչապետը նրան կնշանակի նախագահ:

Նախ թեկնածուների փաստաթղթերն են ուսումնասիրվում՝ արդյոք թեկնածուները համապատասխանում են չափանիշներին, եւ դրական կարծիքի դեպքում արդեն մրցութային խորհուրդը քննության օր է նշանակում եւ ուղիղ եթերում քննում թեկնածուներին, որից հետո բարեվարքությունն են քննում, ապա թեկնածուները մասնագիտական հարցերին են պատասխանում: Առավելագույն միավորներ հավաքած թեկնածուներից մեկն էլ ընտրվում է նախագահ:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ԿԱՆԽՎԵԼ Է ԹՄՐԱՄԻՋՈՑԻ ԻՐԱՑՄԱՆ ԴԵՊՔ

Քրեական ոստիկանության թմրամիջոցների անօրինական շրջանառության դեմ պայքարի վարչությունում օպերատիվ տեղեկություններ էին ստացվել, որ առանձնապես խոշոր չափերի տարբեր տեսակի թմրամիջոցներ, իրացնելու նպատակով, պետք է մաքսանենգ ճանապարհով Իրանից տեղափոխվեն Հայաստան:

Տեղեկությունները փոխանցվել են Քննչական կոմիտեի հատկապես կարեւոր գործերով քննության գլխավոր վարչության մարդկանց թրաֆիքինգի, անչափահասների սեռական անձեռնմխելիության դեմ ուղղված եւ թմրամիջոցների ապօրինի շրջանառության հանցագործությունների քննության վարչություն: Քրեական օրենսգրքի 393-րդ եւ 399-րդ հոդվածների հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

Քրեական ոստիկանության գլխավոր վարչության ծառայողները, համագործակցելով քննչական կոմիտեի աշխատակիցների հետ, իրականացրել են օպերատիվ-հետախուզական միջոցառումներ: Մայրաքաղաքում ձերբակալվել եւ նախաքննական մարմին է ներկայացվել Արարատի մարզի բնակիչ 25 եւ 42-ամյա երկու տղամարդ՝ վերջինիս կողմից շահագործվող «Մերսեդես» մակնիշի ավտոմեքենայով հանդերձ:

Կատարվում է նախաքննություն:

ՀԵՏԱՊՆԴՈՒՄ՝ 9 ԵՐԿՐՊԱԳՈՒԻ ՆԿԱՏՄԱՄԲ

ArmLur.am-ը տեղեկացավ, որ «Փյունիկ»-«Արարատ Արմենիա» մարտի 1-ի հանդիպման ընթացքում բողոքի ակցիայի մասնակից 9 երկրպագուի նկատմամբ խուլիգանության հոդվածով հանրային քրեական հետապնդում է հարուցվել:

Նրանց նկատմամբ խափանման միջոց է ընտրվել բացակայելու արգելքը:

Արդեն մի քանի ամիս Ֆեդերացիայի ղեկավարության հրաժարականը պահանջող երկրպագուները շաբաթ օրը «Փյունիկ»-«Արարատ Արմենիա» հանդիպման 6-րդ րոպեին հերթական ակցիան սկսեցին՝ ճայթուկներ վառեցին ու մտան խաղադաշտ: Խաղը ժամանակավորապես հետաձգվեց, ֆուտբոլիստներին ուղարկեցին հանդերձարան:

Պաշտոնական հեռարձակումը շարունակվեց չեզոք կադրով: Քիչ անց սոցցանցերը հեղեղվեցին տեղից արված տեսանյութերով, որոնցում երեւում էր, թե ինչպես են կարմիր բերետավորները ուժ գործադրում ակցիայի մասնակիցների նկատմամբ: Ավելի ուշ տեղեկություն տարածվեց, որ 9 երկրպագու է ձերբակալվել:

Տեղի ունեցածից մեկ օր առաջ երկրպագուները նմանատիպ ակցիա էին իրականացրել նաեւ «Գանձասար»-«Արարատ» հանդիպման ընթացքում: Ֆուտբոլի ֆեդերացիան այդ օրը հայտարարություն էր տարածել, թե այս անգամ զերծ է մնում համապատասխան միջոցառումներ ձեռնարկելուց: Շաբաթ օրվանից ձերբակալված երկրպագուները երեկ ազատ են արձակվել:

Ք. Մ.

ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՊԵՏԸ ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ Է

ArmLur.am-ի տեղեկություններով՝ Երեւանի քաղաքապետարանի կոմունալ վարչության պետ Արսեն Կարոյանը Հակակոռուպցիոն կոմիտեում քննվող քրեական վարույթի շրջանակներում երեկ ձերբակալվել է: Երեւանի քաղաքապետի մամուլի խոսնակ Հայկ Կոստանյանը ArmLur.am-ի հետ զրույցում հաստատեց տեղեկությունը: Հիշեցնենք, որ փետրվարի սկզբին եւս 4 անձ էր ձերբակալվել, այդ թվում՝ Երեւանի Քաղաքաշինության եւ հողի վերահսկողության վարչության նախկին պետ Ռոբերտ Դարբինյանը, քաղաքաշինության եւ հողի վերահսկողության վարչության տարածքային 2-րդ բաժնի պետ Միքայել Ղիմոյանը, Հասարակական կարգի պահպանության ծառայության պետ Արամ Գյուլզադյանը: Բոլորն էլ կալանավորվել են: Արսեն Կարոյանը ձերբակալվել է այս գործի շրջանակում:

Երեւանի քաղաքապետի մամուլի խոսնակ Հայկ Կոստանյանը գրել է նաեւ, որ դեռեւս նախորդ ամիս՝ Երեւանի քաղաքապետարանի պաշտոնյաների ձերբակալությունից հետո, նշված գործի շրջանակում երեկ ձերբակալվել է Երեւանի քաղաքապետարանի եւս մեկ պաշտոնյա:

Ք. Մ.

ԻՐԱՎԻՃԱԿ

ՄԻՊ-Ն ԱՅՑԵԼԵԼ Է ՀԱՑԱԴՈՒԼ ԱՆՈՂՆԵՐԻՆ

Հայաստանի մարդու իրավունքների պաշտպան Անահիտ Մանասյանը երեկ՝ հացադուլի չորրորդ օրը, այցելել է Ազատության հրապարակում հացադուլ հայտարարած Մանե Թանդիլյանին, Արտավազդ Ալավերդյանին, Վարդան Ավագյանին:

Սակայն «Ապրելու երկիր» կուսակցության համահիմնադիր Մանե Թանդիլյանը հրաժարվել է հանդիպել նրա հետ:

Մանասյանն այնտեղ էր գտնվում հացադուլավորների վիճակին ծանոթանալու համար:

Հիշեցնենք՝ Թանդիլյանը հացադուլ է հայտարարել հաջակցություն Ռուբեն Վարդանյանի, նա այդկերպ ուղերձ է հղում Վարդանյանին՝ դադարեցնելու հացադուլը:

Փետրվարի 26-ին հայտնի դարձավ, որ Ռուբեն Վարդանյանի առողջական վիճակը կտրուկ վատացել է, քանի որ նա ադրբեջանական բանտում փետրվարի 19-ից հացադուլ է սկսել:

Նշենք, որ Մանե Թանդիլյանի հացադուլին են միացել նաեւ այլ քաղաքացիներ:

ԻՆՉ Է ԱՌԱՋԱՐԿՈՒՄ ՓԱՍՏԱԲԱՆԸ

Արցախի Հանրապետության նախկին պետնախարար Ռուբեն Վարդանյանի ընտանիքի փաստաբան Ջարեդ Գենսերը կոչ է արել Հայաստանի Հանրապետության իշխանություններին ավելի ակտիվ միանալ Բաքվի բանտերից գերիների ազատ արձակման գործին եւ պարզաբանել է, թե ինչ կարող է անել Փաշինյանը:

Ըստ փաստաբանի՝

- Առաջնահերթություն հայտարարել գերիների ազատ արձակումը, հրավիրել մամուլի ասուլիս, հոդված գրել առաջատար պարբերականում:
- Հանդիպել գերիների ընտանիքների հետ, դիմել ԿԽՄԿ-ին եւ ԵԱՀԿ-ին՝ դիտորդներ «դատարաններ» ուղարկելու խնդրանքով:
- Կոչ անել դաշնակից երկրներին, որոնք դեսպանատներ ունեն Բաքվում, իրենց ներկայացուցիչներին ուղարկել «դատարաններ» եւ նույնիսկ խնդրել Բաքվին թույլատրել հայ դիտորդների մասնակցությունը:
- Դիմել Ամերիկայի Միացյալ Նահանգների նախագահին եւ պետքարտուղարին, Ֆրանսիայի եւ Եվրամիության առաջնորդներին:
- Շարունակել դատավարությունները Միավորված ազգերի կազմակերպության Միջազգային դատարանում եւ Մարդու իրավունքների եվրոպական դատարանում, պահանջել ՄՔԴ դատախազին Արցախից Հայաստան 120 000 հայերի արտաքսման վերաբերյալ հետաքննություն սկսել:
- Դիմել Միավորված ազգերի կազմակերպության գլխավոր քարտուղարին եւ Միավորված ազգերի կազմակերպության Մարդու իրավունքների գերագույն հանձնակատարին:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ մարտի 3-ից 4-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 128 դեպք, որից 4-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ԴԻՊԼՈՄ ՉՈՒՆԵՆ, ԲԱՅՑ ՊԱՇՏՈՆ ԵՆ ԶԲԱՂԵՑՆՈՒՄ

Տավուշի մարզում բարձրագույն կրթությամբ հազարավոր անձինք կան, որոնք աշխատանք չունեն: Տավուշի մարզի հանրակրթական դպրոցներից ազատվել են բարձրագույն կրթություն չունեցող 55 անձինք, որոնցից շատերը, ունենալով միջին մասնագիտական մանկավարժական կրթություն, երկար տարիներ հաջողությամբ դասավանդում էին: Տավուշի մարզի համայնքներում օրենքի ուժով աշխատանքից ազատվել են 1000-ից ավելի բնակիչ ունեցող բնակավայրերի այն վարչական ղեկավարները, որոնք չունեն բարձրագույն կրթություն: Իսկ Տավուշի մարզպետարանում աշխատում են բարձրագույն կրթություն չունեցող 2 պաշտոնյաներ: Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին հարցրել ենք՝ Տավուշի մարզպետի աշխատակազմի 2 պաշտոնյաները, ովքեր բարձրագույն կրթություն չունեն, աշխատակազում ի՞նչ պաշտոններ են զբաղեցնում: Մարզպետարանից պատասխանել են. «ՀՀ Տավուշի մարզպետի աշխատակազմի բարձրագույն կրթություն չունեցող երկու քաղաքացիական ծառայողներից մեկը գյուղատնտեսության եւ շրջակա միջավայրի պահպանության վարչության, իսկ մյուսը ֆինանսական վարչության մասնագետներ են:

Քաղաքացիական ծառայության մասնագիտական պաշտոնների 6-րդ, 7-րդ եւ 8-րդ ենթախմբերի պաշտոնները զբաղեցնելու համար Հայաստանի Հանրապետության քաղաքացին պետք է ունենա առնվազն միջնակարգ կրթություն»:

ՎԱՃԱՌՈՂՆԵՐԸ ԱՎԵԼԻ ՇԱՏ ԵՆ ՇԱՀՈՒՅԹ ՍՏԱՆՈՒՄ

Ներկայումս Նոյեմբերյան համայնքի բնակավայրերում կարտոֆիլի կիլոգրամը, կախված դրա որակից, չափերից, վաճառվում է 100-150 դրամով, իսկ Երեւանում՝ 250-300 դրամով: Նոյեմբերյան համայնքում գյուղի կովերի 1 լիտր անարատ կաթը վաճառվում է 250-300 դրամով, երբ Երեւանի սուպերմարկետներում կասկածելի բաղադրության կաթի լիտրի գինը 520 դրամ է, իսկ Դիլիջան համայնքում թողարկվող «Դիլի» ապրանքանիշի անարատ, 0,75 լիտր տարողությամբ շշով կաթի գինը՝ 900 դրամ: Նոյեմբերյան համայնքի Բագրատաշեն գյուղի բնակիչ Մուշեղ Մամուլյանը բողոքում է. «Այգուց միրգը՝ արքայանարինջը, 100-150 դրամով մի կերպ ենք վաճառում, մի կերպ են տանում, իսկ Երեւան քաղաքի սուպերմարկետներում դրա գինը 700-1000 դրամ է»: Գյուղմթերքներ վերավաճառողներն ավելի շատ շահույթ են ստանում, քան դրանք արտադրողները, ուստի հեռավոր մարզերի գյուղերում նվազում են մշակվող հողատարածքները, պահվող անասունների քանակը:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՄԱՐՏՈՒՆՈՒ ԲԿ-Ի ՏՆՕՐԵՆԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

ՓԱՍՏԱԹՂԹԵՐԸ ՀԱՎԱՍՏԻ ՉԵՆ ԵՂԵԼ

«Առողջապահության իրավունք» ՀԿ նախագահ Անուշ Պողոսյանը սոցցանցի իր էջում հրապարակում էր կատարել Մարտունու ԲԿ-ի վերաբերյալ:

Իր հրապարակման մեջ Պողոսյանը նշել է, որ Մարտունու ԲԿ-ի տնօրեն Անդրանիկ Հարությունյանը, ով ազատվել էր տնօրենի պաշտոնից, 1-2 ժամ անց նշանակվել է Մարտունու ԲԿ-ի ժամանակավոր պաշտոնակատար:

«Եվ ահա այսօր՝ 1 տավա մեջ 4-րդ անգամ, կայացավ Մարտունու ԲԿ-ի մրցույթը՝ առանց հաղթողի:

Եվ այսպես, 2024 թվականի դեկտեմբերի 2-ին Անդրանիկ Հարությունյանին հանձնաժողովը քվեարկությամբ 7 կողմ ձայնով թույլ չտվեց մասնակցել մրցույթին, քանի որ նա չուներ 3 տարվա մասնագիտական ստաժ: Սակայն դա չխանգարեց Գեղարքունիքի մարզպետին Անդրանիկ Հարությունյանին նշանակել ժամանակավոր պաշտոնակատար», - սոցցանցի իր էջում գրել է Պողոսյանը:

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ Մարտունու ԲԿ-ի մրցույթին հետաքրքրության պակաս չի եղել: Երբ ուսումնասիրվել են Անդրանիկ Հարությունյանի թղթերը, պարզվել է, որ վերջինիս աշխատանքային գրքույկում եղել է ռուսերեն գրառում աշխատանքային փորձի եւ տեղեկանքի մասին, եւ հետաքրքիրն այն է, որ ոչ մեկի ամսաթվերը իրար չեն համապատասխանել:

Ավելին՝ ՀՀ առողջապահության նախարարությունը հարցում էր արել ՀՀ աշխատանքի եւ սոցիալական հարցերի նախարարությանը Անդրանիկ Հարությունյանի աշխատանքային փորձի վերաբերյալ, եւ ուշագրավն այն է, որ ստացված պատասխանը բացասական է եղել, ինչն էլ նշանակում է, որ վերջինիս փորձը չի համապատասխանում:

ArmLur.am-ի տեղեկությունների համաձայն՝ մարզպետարանը կողմ է քվեարկել եւ նշել, որ առկա փաստաթղթերը ճշգրիտ փաստաթղթեր են, մինչդեռ առողջապահության նախարարությունը նշել է, որ դրանք համապատասխան փաստաթղթեր չեն:

Մարտունու ԲԿ-ի ժ/պ հանդիսացող Անդրանիկ Հարությունյանը մրցույթը չի հաղթահարել, քանի որ մասնագիտական առումով, բնականաբար, չուներ այն հմտությունները, որոնք պետք էին, սակայն ամբողջ հարցն այն է, որ մարզպետարանն ընդունել էր այդ փաստաթղթերը եւ ոչ մի լիազորված գործիքով չէր ստուգել այդ փաստաթղթերի հավաստիությունը եւ, ենթադրաբար, չէր էլ ցանկացել ստուգել:

Նախարարության բոլոր փաստարկներին եւ սոցապ նախարարության հարցմանը նրանք դեմ են գնացել՝ պնդելով, որ այդ փաստաթղթերը իրավաչափ են, եւ պետք է Անդրանիկ Հարությունյանը մասնակցի մրցույթին:

ԱՆՆԱ ՍՐԱՊԻՈՆՅԱՆ

ԸՆԹԱՑԻԿ

ՄԱՐԶԱԿԱՌՈՒՅՑԻ ՃԱԿԱՏԱԳԻՐԸ

ԱԺ լիագումար նիստում երեկ երկրորդ ընթերցմամբ եւ ամբողջությամբ քննարկվել է ««Պետական գույքի մասնավորեցման 2017-2020 թվականների ծրագրի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» օրենքի նախագիծը, որով առաջարկվում է Ծիծեռնակաբերդի խճուղի 5 հասցեում գտնվող մարզակառույցը հանել օտարվող գույքի ցուցակից եւ հանձնել ԿԳՄՍ նախարարությանը:

Հարցը զեկուցել է ԿԳՄՍ նախարար Ժաննա Անդրեասյանը՝ նշելով, որ օրենսդրական նախաձեռնությունը նպատակ ունի լուծում տալ հանրապետությունում մարզակառույցների սղության եւ անհրաժեշտ սպորտային միջավայրի բացակայության խնդրին: Նրա խոսքով՝ նախագծի ընդունմամբ ապահովվում է կարեւորագույն սպորտային ենթակառուցվածքներից մեկի՝ պետության տնօրինմանը վերադարձը:

«Մասնավորի հետ համագործակցությամբ նախատեսում ենք այստեղ ունենալ ամբողջական զարգացած, արդիական համակարգ, որը կօգնի նաեւ խոշորագույն մարզական մրցաշարերի կազմակերպմանը, ուսումնամարզական հավաքների իրականացմանը՝ ամենատարբեր մարզաձեւերի ուղղությամբ: Հաշվի առնելով, որ հարեւանությամբ գործում է նաեւ Մարզահամերգային համալիրը՝ կունենանք ամբողջական ենթակառուցվածք՝ ավելի խոշոր միջոցառումներ հյուրընկալելու եւ ավելի համակարգային մոտեցում ցուցաբերելու համար: Գույքը բավականին մաշված է, եւ ներդրումների կարիք կա: Վստահ եմ՝ այս առումով եւս կգտնենք լավագույն եղանակը»,- ասել է Ժաննա Անդրեասյանն ու տեղեկացրել՝ արդեն իսկ կան քննարկումներ գույքի հետագա զարգացման ուղղությամբ:

ԿԳՄՍ նախարարը նաեւ ընդգծել է՝ մարզական ենթակառուցվածքների զարգացումը ՀՀ ֆիզիկական կուլտուրայի եւ սպորտի ոլորտների 2024-2030 թվականների ռազմավարության կարեւորագույն դրույթներից է:

Հարակից զեկուցող, ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, սփյուռքի, երիտասարդության եւ սպորտի հարցերի մշտական հանձնաժողովի անդամ Ջուլիետա Ազարյանը նշել է՝ նախագիծը սահմանված կարգով ստացել է գլխադասային հանձնաժողովի դրական եզրակացությունը: Նա առաջարկել է կողմ քվեարկել նախագծին՝ հաշվի առնելով, որ կոնցեպտուալ առումով համալիրը բացառիկ է լինելու:

Ծիծեռնակաբերդի խճուղու 5 հասցեում տեղակայված մարզահամալիրն ունի վարչական տարածք, ճաշարան, ննջարանային մասնաշենք՝ նախատեսված շուրջ 60 հոգու համար, 2 մարզադահլիճ՝ յուրաքանչյուրը 1600քմ: Մարզահամալիրը ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությանը հանձնելուց հետո նախատեսվում է այն հիմնանորոգել եւ ստեղծել հավաքական թիմերի մարզման կենտրոն: Հաշվի առնելով ննջարանային մասնաշենքի եւ երկու մարզադահլիճների առկայությունը՝ մարզակառույցը կծառայի ուսումնամարզական հավաքների, ՀՀ առաջնությունների եւ այլ մրցաշարերի անցկացման համար:

ԲԵՐԴ–ՃԱՄԲԱՐԱԿ ՃԱՆԱՊԱՐՀԸ ՓԱԿ Է

Փրկարար ծառայությունը տեղեկացնում է, որ ՀՀ տարածքում կան փակ եւ դժվարանցանելի ավտոճանապարհներ:

Փակ են Արագածոտնի մարզում «Ամբերդ» բարձր լեռնային օդերեւութաբանական կայանից Քարի լիճ եւ Ամբերդ ամրոց տանող ավտոճանապարհները:

Բերդ-Ճամբարակ ավտոճանապարհը փակ է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար:

Վարդենյաց լեռնանցքը (ձյուն, բուք) փակ է կցորդիչով բեռնատարների համար, դժվարանցանելի՝ մյուս տրանսպորտային միջոցների համար:

Արագածի տարածաշրջանի ավտոճանապարհներին տեղ-տեղ առկա է մերկասառույց: Վրաստանի ՆԳՆ ԱԻ դեպարտամենտից եւ ՌԴ ԱԻՆ Հյուսիսային Օսիայի ճգնաժամային կառավարման կենտրոնից ստացված տեղեկատվության համաձայն՝ Ստեփանծմինդա-Լարս ավտոճանապարհը բաց է բոլոր տեսակի տրանսպորտային միջոցների համար:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 16 պատահար. 5 մարդ զոհվել է, 19-ը՝ ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆ

ՓՈԽՀԱՏՈՒՅՈՒՄ

ՀՀ Կառավարությունը կվերադարձնի տարեկան հայտարարագիր լրացրած քաղաքացիների եկամտային հարկը՝ որպես առողջապահության եւ/կամ կրթության գծով իրենց կողմից կատարված սոցիալական ծախսերի փոխհատուցում: Կառավարությունը պատրաստել եւ հրապարակել է ուղեցույց, որտեղ քաղաքացիները կարող են ծանոթանալ որոշման բոլոր պայմաններին:

Եկամտային հարկ վճարող եւ տարեկան հայտարարագիրը լրացրած քաղաքացիները կարող են Կառավարության կողմից ստանալ փոխհատուցում իրենց կամ իրենց ընտանիքի անդամների կրթության, ատամնաբուժական ծառայությունների կամ առողջապահական ապահովագրության փաթեթների ձեռքբերման դիմաց: Փոխհատուցումը յուրաքանչյուր հաշվետու տարվա համար չի կարող գերազանցել 100 հազար դրամը, ինչպես նաեւ պարտադիր պայման է վճարումներն իրականացնել անկանխիկ եղանակով (բացառություն է միայն դպրոցական դասագրքերի համար վճարվող գումարը):

ՈՐ ՄԹԵՐՔՆԵՐՆ ԵՆ ԴՐՈՇՄԱՎՈՐՎԵԼՈՒ

ՊԵԿ-ից հաղորդագրություն են տարածել, որտեղ հիշեցվում է. «ՀՀ կառավարության կողմից հաստատվել է Հայաստանում նույնականացման միջոցներով դրոշմավորման ենթակա մի շարք ապրանքների ցանկը եւ դրոշմավորման ներդրման ժամկետները: Մասնավորապես.

2025 թվականի մարտի 1-ից նույնականացման միջոցներով դրոշմավորվում են թեյը եւ սուրճը, կենդանական եւ բուսական յուղերը, ձեթը, պահածոյացված մթերքը, շոկոլադը եւ կակաո պարունակող սննդամթերքը, մակարոնեղենը, գազավորված եւ ոչ գազավորված ըմպելիքները, ոչ ալկոհոլային խմիչքները, գարեջուրը եւ քացախը (ԱՏԳ ԱԱ 0901, 0902, 0903 00 000 0, 2101, 1504, 1505 00, 1506 00 000 0, 1507, 1508, 1509, 1510, 1512 11 910, 1512 19 900, 1515, 1516 20 960 2, 1517, 1602, 1604, 1605, 2001, 2002, 2003, 2004, 2005, 2006 00, 2007, 2008, 1806, 1902, 1903 00 000 0, 1904, 2009, 2202, 2203 00, 2209 00):

2025 թվականի հունիսի 1-ից դրոշմավորվելու են՝ մսամթերքը, կաթնամթերքը, պաղպաղակը, երշիկեղենը եւ կենդանիների կերը (ԱՏԳ ԱԱ 0207, 0209, 0210, 0401, 0402, 0403, 0404, 0405, 0406, 2105, 1601 00, 1603 00, 2309):

2025 թվականի սեպտեմբերի 1-ից նաեւ դրոշմավորվելու են՝ նավթավերամշակման արտադրանքը, ներկանյութերը, լաքերը եւ չորարարները (ԱՏԳ ԱԱ 2710 19 710 0, 2710 19 750 0, 2710 19 820 0, 2710 19 840 0, 2710 19 860 0, 2710 19 880 0, 2710 19 920 0, 2710 19 940 0, 2710 19 980 0, 3403 19 100 0, 3403 19 900 0, 3403 99 000 0, 3203 00, 3204, 3206, 3207 10 000 0, 3208, 3209, 3210 00, 3212, 3205 00 000 0, 3211 00 000 0):

2026 թվականի հունվարի 1-ից՝ դեղերը, վիտամինները օծանելիքը, կոսմետիկան հիգիենայի եւ խնամքի միջոցները (ԱՏԳ ԱԱ 2936, 3002 41 000 0, 3002 42 000 0, 3004, 3006 30 000 0, 3006 60 000, 3303 00, 3304, 3305, 3306, 3307, 3401, 3402):

ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔ ԿԱ

ԲՌՆԻ ՏԵՂԱՀԱՆՎԱԾ ԱՐՑԱԽՑԻՆԵՐԸ՝ ՄԻ ՇԱՐՔ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԱՌՔԵՎ

ArmLur.am-ի խմբագրություն էր դիմել 2023թ. Արցախից բռնի տեղահանված, ներկայումս Գորիսում հաստատված Ժորա Հայրապետյանը: Նա ներկայումս սովորում է Գորիսի պետական համալսարանում: Ստեփանակերտում աշխատել է փաստաբանական գրասենյակում որպես՝ գործավար, փաստաբանի օգնական: Ներկայումս չի աշխատում, ասում է՝ Գորիսում բարդ է աշխատանք գտնելը:

Ընտանիքում երեք հոգի են՝ ինքը, մայրը եւ թոշակառու տատիկը: Ընտանիքում այս պահին միակ եկամուտը իր տատիկի ստացած թոշակն է եւ Կառավարության կողմից տրամադրվող 40 հազար դրամ աջակցությունը՝ որն էլ ապրիլին կնվազի, իսկ մյուս տարի հունվարից այլեւս չի լինի: Ընտանիքի դրությունը ավելի է բարդանում, քանի որ Հայաստանում դեռ չունեն ձեռք բերած գույք եւ Գորիսում ապրում են վարձով: Ընտանիքի ստացած եկամուտը չի բավարարում բնակարանի վարձի, սննդի, դեղորայքի եւ կոմունալ ծախսերի համար:

Շատ արցախցիների պես իրենց ընտանիքն էլ դժգոհ է Կառավարության որոշումից՝ որով կնվազեցվի տեղահանվածներին տրամադրվող աջակցությունը:

Խնդիր է նաեւ որ իրենք չեն համարվում ՀՀ քաղաքացիներ, սակայն երկար տարիներ բոլոր միջազգային կառույցները իրենց համարել են Հայաստանի քաղաքացի:

Երիտասարդ արցախցու համար անհասկանալի է շարունակում մնալ, թե ինչու պետք է հիմա դառնան ՀՀ քաղաքացիներ, եթե իրենց անձնագրերում գրված է, որ իրենք ՀՀ քաղաքացի են: Այս ընթացքում շատ բարդություններ են առաջանում փաստաթղթերի վերաբերյալ, կես կատակ, կես լուրջ նշում է, որ դարձել է իրենց բնակարանի իրավաբանը եւ փաստաբանը:

Ընտանիքի համար լուրջ խնդիր է նաեւ դեղորայքի հարցը, քանի որ մայրն ունի շաքարային դիաբեդ, Արցախում իրենց անհրաժեշտ դեղամիջոցը տրամադրում էին, սակայն Գորիսի պոլիկլինիկայից ասում են, որ իրենք տվյալ դեղից չունեն:

Ժորայենց ընտանիքը դեռ չի դիմել բնակարանների փոխհատուցման ծրագրի համար, ըստ այդ փոխհատուցման՝ ամենայն հավանականությամբ կտրամադրեն 10-15 միլիոն դրամ: Սա, ըստ մեզ հետ զրուցած արցախցու, բավարար չէ, այդ գումարով իրենք չեն կարող բնակարան գնել, քանի որ շուկայական հարաբերություններում բնակարանները ավելի թանկ են: Նա համարում է, որ ավելի արդարացի կլինի, եթե իրենց փոխհատուցեն Արցախում թողած իրենց ունեցվածքին համապատասխան:

ԱՐՄԵՆ ԽԵՉՈՒՄՅԱՆ

ԲԱՆԿԱՅԻՆ

Fastex-Ը ՄԱՄՆԱԿՑԵԼ Է SiGMA Eurasia 2025-ԻՆ

Ս.թ. փետրվարի 23-25-ը Fastex-ը մասնակցել է SiGMA Eurasia-ին՝31D տաղավարում ներկայացնելով իր Web3 պրոդուկտները եւ ծառայությունները: Ընկերության B2C պորտֆոլիոն ներառում է Fastex Exchange, Fastex Pay, Fastex Wallet, Fastex Card, YoCerebrum պրոդուկտները, ftNFT մարքեթփլեյսը եւ ֆիզիկական տարածքները:

Միջոցառմանը Fastex էկոհամակարգը ներկայացրել է B2B լուծումների փաթեթ՝ BaaS (Blockchain as a Service) «բլոկչեյնը որպես ծառայություն» լուծումը, սեփական կրիպտոակտիվի զարգացման հեռանկարները եւ white label կրիպտո փոխանակման հարթակի առանձնահատկությունները: Վերջինս ընկերություններին թույլ է տալիս ստեղծել եւ կառավարել սեփական փոխանակման հարթակներ եւ ինտեգրել տարբեր կրիպտոակտիվներ:

Fastex-ի իրավաբանական գծով տնօրեն եւ տնօրենների խորհրդի անդամ Վարդան Խաչատրյանը փետրվարի 24-ին մասնակցել է «Տեսլականից իրավական կարգավորումներ. ինչպես են ԱՄԷ-ը ձեւավորում Web3-ի ապագան» թեմայով քննարկմանը: Հանդիպման ընթացքում անդրադարձ է կատարվել թվային տնտեսության վրա օրենսդրական կարգավորումների ներգործությանը եւ կայուն աճի ապահովմանը:

Հիշեցնենք, որ Fastex-ն արագ զարգացող Web3 էկոհամակարգ է, որն իր օգտատերերին տալիս է հսկայական հնարավորություններ եւ հարմարավետ միջավայր՝ առաջարկելով Fastex Exchange կրիպտո փոխանակման հարթակը, Fastex Card-ը, Fastex Wallet-ը եւ ftNFT-ն՝ իր հարթակներով եւ ֆիզիթալ սփեյսներով, ինչպես նաեւ YoHealth՝ առողջ ապրելակերպը խթանող հավելվածը: Fastex-ը կարեւորում է անվտանգ եւ հուսալի միջավայրի ապահովումը համաշխարհային թվային ֆինանսների զարգացող աշխարհում՝ մշտապես հետեւելով ոլորտի միտումներին:

«ՖԱՍԹ» ԲԱՆԿ. ՎԵՐԱԲԲԵՆԴԱՎՈՐԵԼ Է ՄԱՄՆԱՃՅՈՒՂԸ

«Ֆասթ» բանկը վերաբբենդավորել է Աշտարակ քաղաքում գործող մասնաճյուղը: Բանկը, հավատարիմ մնալով իր առաքելությանը, շարունակում է վերաբրենդավորել եւ վերազինել բանկի բոլոր մասնաճյուղերը՝ ապահովելով դրանք ժամանակակից թվային սարքավորումներով:

«Ֆասթ» բանկի Աշտարակ մասնաճյուղի կառավարիչ Ալիկ Դավթյանն ասել է. «2025 թվականն սկսում ենք նոր եւ դրական փոփոխություններով: «Ֆասթ» բանկի Աշտարակ մասնաճյուղն այսուհետեւ իր հաճախորդներին սպասարկելու է ավելի գեղեցիկ եւ հարմարավետ միջավայրում: Արագ եւ որակյալ սպասարկումն ապահովելու համար մեր մասնաճյուղը հագեցած է բոլոր անհրաժեշտ միջոցներով, եւ ինչպես նախկինում, շարունակելու ենք աշխատել 24/7 գրաֆիկով»:

«Ֆասթ» բանկն իր հաճախորդների համար ստանձնել է նորարարական, բազմակողմանի եւ բարձրորակ ֆինանսական լուծումներ տրամադրող գործընկերոջ դեր: Աշտարակի մասնաճյուղում հաճախորդների հերթը կարգավորում է էլեկտրոնային կառավարման համակարգը, գործում են նաեւ ավտոմատ ինքնասպասարկման սարքավորումներ:

«Ֆասթ» բանկը թվային բանկ դառնալուն միտված ընկերություն է, որը 24/7 աշխատանքային գրաֆիկով ներկայացված է Հայաստանի բոլոր մարզերում:

«Ֆասթ» բրենդը նախորդ տարի տոնել է ստեղծման 30-ամյակը:

«Ֆասթ» բանկը վերահսկվում է ՀՀ Կենտրոնական բանկի կողմից:

●«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

«ԱՆՈՐԱ». 5 ՕՍԿԱՐ ԵՎ ՄԵԾ ԱՂՄՈՒԿ

ԻՆՉՆ Է ԱՅԴՔԱՆ ԳՐԱՎԵԼ ԱՄԵՐԻԿՅԱՆ ԿԻՆՈԱԿԱԴԵՄԻԱՅԻՆ

Մարտի 3-ին ամբողջ համացանցը ցնցեց «Օսկար» մրցանակաբաշխությունը, որում «Անորա» ֆիլմը նվաճեց միանգամից 5 ոսկե արձանիկ՝ 6 անվանակարգերում նոմինացված լինելուց հետո արժանանալով 5 «Օսկարի»:



Իհարկե այս ամենը աժիոտաժ չէր առաջացնի, եթե ֆիլմում նկարահանված չլինեին հայազգի դերասաններ Վաչե Թովմասյանն ու Կարեն Կարագուլյանը:

Ի սկզբանե ֆիլմը «Օսկարի» մրցանակաբաշխությանը նոմինացված է եղել 6 անվանակարգում, սակայն ինչպես արդեն հայտնեցինք, արժանացել է 5-ին:

Ֆիլմը նոմինացվել է «Լավագույն ֆիլմ» անվանակարգին եւ ստացել հայտնի ոսկեզօծ արձանիկը: «Լավագույն ռեժիսոր» է ճանաչվել Շոն Բեյքերը դարձյալ «Անորա» ֆիլմի համար, իսկ լավագույն դերասանուհի՝ Մայքի Մեդիսոնը: Ֆիլմն արժանացել է «Օսկարի» նաեւ «Լավագույն մոնտաժ» եւ «Լավագույն օրիգինալ սցենար» անվանակարգերում:

Էկրաններ բարձրանալուց ի վեր ֆիլմի քննադատները բաժանվել են երկու բեւեռների. մի մասը ֆիլմը համարում է ուսուցողական, խոր եւ բարոյախրատական, իսկ մի մասն էլ այն համարում է դասական հիմարություն, դեգրադացնող ֆիլմ:

Ըստ կինոքննադատների՝ մրցանակներից «Լավագույն օրիգինալ սցենար» եւ «Լավագույն մոնտաժ» անվանակարգերը անիմաստ են, քանի որ այս անվանակարգերով էլ ավելի է արժեւորվում ֆիլմը: Իհարկե, ամեն ոք ունի իր կարծիքը, որը բնական է:

ArmLur.am-ը ներկայացնում է, թե ինչի մասին է ֆիլմը:

«Անորայի» պրեմիերան կայացել է 2021 թվականի մայիսի 21-ին՝ Կաննի կինոփառատոնում: Ավելի ուշ Կաննի կինոփառատոնում ֆիլմն արժանացել է «Ոսկյա արմավենու ճյուղի»:

Ֆիլմի գործողությունները տեղի են ունենում Բրուքլինում: Ֆիլմի գլխավոր հերոսուհին՝ մերկապարուհի Էնին՝ նույն ինքը Անորան, ամուսնանում է ռուս օլիգարխի որդու՝ Իվան Զախարովի հետ: Փեսայի ծնողները, իմանալով կատարվածի մասին, եւ թե ում է որպես կողակից ընտրել իրենց որդին, հապճեպ գալիս են Նյու Յորք՝ ամեն բան կարգավորելու:

Ֆիլմում Վաչե Թովմասյանը՝ Գառնիկի, իսկ Կարեն Կարագուլյանը Թորոսի դերում են:

Կան կարծիքներ, որ ֆիլմում հայերի կերպարը շատ թյուր եւ սխալ ձեւով է ներկայացված, եւ նման կերպ ներկայացնելուց հետո էլ հայ ազգի մասին առաջանում է հակասական կարծիք ու պատկերացում:

Ինչո՞ւ հայ հանդիսատեսի, կինոսերի կողմից ֆիլմը չարժանացավ այնպիսի հիացմունքի եւ մեծարումների այնպես, ինչպես, օրինակ, ամերիկյան հանդիսատեսի կողմից:

Կան շատ տարբերակներ, որոնցից առաջինը կարելի է նշել ազգային մտածելակերպը, երկրորդ հերթին, հավանաբար, բաց տեսարաններն ու հերոսուհու մասնագիտության հանգամանքը:

Այնուամենայնիվ, մինչ այս պահը ֆիլմն ակտիվորեն քննարկվում, քննադատվում քարկոծվում կամ մեծարվում է:

Հարկ է նշել, որ ֆիլմի յուրաքանչյուր հաղթանակ վայելել են դերասանները, իրենց տպավորություններով կիսվել «Սթորիներ» բաժնում:

Վաչե Թովմասյանն իր ինստագրամյան միկրոբլոգի էջում ստացած յուրաքանչյուր «Օսկար»-ից լուսանկար է հրապարակել Կարեն Կարագուլյանի հետ, եւ, ստանալով 5-րդ արձանիկը, նշել է, որ տուն են տանում 5 օսկար:

Դերասանների ոգեւորությունն այնքան մեծ էր, որ անգամ լողավազան գնացել են մրցանակներով:

Նշենք, որ ֆիլմի ռեյտինգը տարբեր կինոդիտման հարթակներում 7 եւ ավելի է:

ԱՆՆԱ ՄՐԱՊԻՈՆՅԱՆ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍ

ՖՐԱՆԿՈՖՈՆ ԱՐՎԵՍՏԱԳԵՏՆԵՐԻ ԳՈՐԾԵՐԸ՝ ՄԵԿ ՏԱՆԻՔԻ ՏԱԿ

«Ֆրանկոֆոնիայի օրերը Հայաստանում» ծրագրի մեկնարկին ընդառաջ երեկ՝ մարտի 4-ին Երեւանի ժամանակակից արվեստի թանգարանում բացվեց Salut Francophonie ցուցահանդեսը: Ցուցադրությանը ներկայացված էր Ֆրանկոֆոնիայի միջազգային կազմակերպության անդամ երկրներից 18 արվեստագետների երեսունից ավելի աշխատանք:

Թանգարանի փոխտնօրեն Զառա Այրումյանն միջոցառմանը հայտնել է, որ ցուցանմուշներն իրենց ֆոնդերից են: «Կան ֆրանսիայից, Լիբանանից, Կանադայից, Հայաստանից տարբեր արվեստագետների գործեր: Մեր մշտական ցուցադրության մեջ եւս ֆրանկոֆոն երկրներից արտիստների աշխատանքներ կան, սակայն հեղինակներից յուրաքանչյուրը մեկ գործով է ցուցադրված, ուստի չցանկացանք ընդհանուր էքսպոզիցիայից հանել», - նշել է նա:

Փոխտնօրենի խոսքով՝ ցուցադրվել են նաեւ նմուշներ, որոնց մասին թանգարանի հիմնադիր Հենրիկ Իգիթյանի ժամանակներից են հոգ տանում. խոսքը Ժանսեմի եւ Անահիտ Աբրահամյանի կտավներին է վերաբերում: Մյուս հեղինակներն ավելի երիտասարդ սերնդի ներկայացուցիչներ են:

Այսօր՝ մարտի 5-ին, Հենրիկ Իգիթյանի ծննդյան օրն է: Թանգարանը միշտ աշխատել է մարտի 5-ին ցուցադրություն կազմակերպել եւ նոր հեղինակների ներկայացնել, որովհետեւ Իգիթյանն իր առաքելությունը տեսել է նաեւ երիտասարդ ու տաղանդավոր նկարիչներին բացահայտելու մեջ:

«Այս ցուցադրությունն ակամայից նաեւ այդ նպատակին է ծառայել, որովհետեւ ներկայացված են նոր անուններ: Հինգ կամ վեց հեղինակ ֆրանսիական Diaspoart կազմակերպության նկարիչներն են: Կազմակերպության թե՛ հայ, թե՛ ֆրանսիացի նկարիչները միշտ արձագանքում են Հայաստանում տեղի ունեցող իրադարձություններին: Նրանք մասնակցել են Հայոց ցեղասպանությանը վերաբերող ցուցահանդեսին, նաեւ որոշ աշխատանքներ են նվիրաբերել», - ընդգծել է նա:

Ցուցադրությանն այցելուները կարող են ծանոթանալ Ժանսեմի /Հովհաննես Սեմերջյան/, Լորան Նիսու Սունի, Վաչե Տեմերճեանի, Ասիլվայի, Նինա Խեմչյանի, Սիբի, Քրիստին Հագոբեանի, Տիպար Ասատուր Աբարդեանի, Թալին Ջաբուեանի, Գրիգոր Նորիկյանի, Շահե Կազանի, Ամալի Գալստեանի (Ֆրանսիա), Լեո-Լեո Վարդանյանի, Հայկ Մեսրոպյանի, Ալեքսեյ Պապովյանի, Վաղարշակ Էլիբեկյանի (Հայաստան), Անահիտ Աբրահամյանի (Կանադա), Միրեյ Գոգիկյանի (Լիբանան) յուրահատուկ աշխատանքներին:

ՄԱՐԶԱԿԱՆ

ԿՓՈԽԱՐԻՆԻ՞ ԳՎԱՐԴԻՈԼԱՅԻՆ

Խոսեպ Գվարդիոլան աշնանը երկարաձգեց պայմանագիրը «Մանչեսթեր Սիթիի» հետ, սակայն չի բացառվում ընթացիկ մրցաշրջանի ավարտից հետո նրա հեռանալու հավանականությունը:

City Football Group-ը նման հնարավորության համար նոր ծրագիր է մշակում:

Ինչպես հայտնում է Daily Mail-ը, ակումբի ղեկավարները ուշադիր հետեւում են Սեսկ Ֆաբրեգասին, ով այժմ գլխավորում է «Կոմո» ակումբը:

Միաժամանակ նշվում է, որ Ֆաբրեգասին հետեւում են նաեւ այլ եվրոպական գրանդներ, այդ թվում՝ «Միլանը» եւ «Ինտերը»:

ԱՄԵՆԻՑ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՖՈՒՏԲՈԼԻՍՏՆԵՐԸ

«Լիվերպուլի» վինգեր Մոհամեդ Սալահը շարունակում է մնալ թոփ-5 լիգաներում ամենաարդյունավետ ֆուտբոլիստն այս պահի դրությամբ:

Նա իր ակտիվում ունի 42 միավոր գոլ + գոլային փոխանցում համակարգով:

Երկրորդ ու երրորդ տեղերն այս ցուցանիշով զբաղեցնում են «Բավարիայի» հարձակվող Հարի Քեյնը եւ «Մանչեսթեր Սիթիի» հարձակվող Օմար Մարմուշը:

Թոփ-5 լիգաների ամենաարդյունավետ ֆուտբոլիստներն այս պահի դրությամբ.

1. Մոհամեդ Սալահ. «Լիվերպուլ» - 42 (25+17)
2. Հարի Քեյն. «Բավարիա» - 29 միավոր (21+8)
3. Օմար Մարմուշ. «Մանչեսթեր Սիթի»/«Այնտրախտ» - 28 (18+10)
4. Մատեո Ռետեգի. «Ատալանտա» - 25 (21+4)
5. Ալեքսանդր Իսակ. «Նյուքասլ» - 24 (19+5)

ԽԱՆԳԱՐՈՂ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐ՝ ՎԵՐԱԴԱՐՁԻ ՀԱՄԱՐ

«Բարսելոնայի» գլխավոր մարզիչ Հանս-Դիտեր Ֆլիկը նպատակահարմար չի գտնում «Սանտոսի» բրազիլացի հարձակվող Նեյմարի վերադարձը կատալոնական ակումբ: Այս մասին հայտնում է Sport.es-ը:

Աղբյուրի համաձայն՝ գերմանացի մասնագետը վստահ չէ փորձառու խաղացողի ֆիզիկական պատրաստվածության, ինչպես նաեւ Սաուդյան Արաբիայից հետո նրա խաղամակարդակի վրա: Բացի այդ, ակումբը դեռ չունի ֆինանսական կայունություն, ուստի հայտնի չէ, թե կատալոնացիները կկարողանա՞ն իրենց թույլ տալ Նեյմարի պայմանագիրը:

33-ամյա բրազիլացին «Բարսելոնայում» հանդես է եկել 2013-ից 2017 թվականներին:

Թիմի հետ նա դարձել է Իսպանիայի չեմպիոն եւ Չեմպիոնների լիգայի գավաթակիր:

● *Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը մարտի 9-ին տեղի կունենա Երգեհոնային երաժշտության համերգ: Տոմսերի արժեքը՝2000, 3000, 4000 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՀՈԳԵՎՈՐ

ՀԱՐՑ. Հեսարրիր է իմանալ՝ Հայ Առաքելական եկեղեցին ինչո՞ւս է ընդունում կին հոգեւորական ունենալու գաղափարը: Արեւմուտքում կան եկեղեցիներ, ուր դա հնարավոր է:

Արեւիկ Մալխասյան (34 տարեկան, տնտեսագետ)



ՊԱՏԱՍԽԱՆ. Հայ Առաքելական Եկեղեցուն ընդհանրապես խորթ է կանանց քահանայագործելու հասկացողությունը, որը նորամուտ է քրիստոնյա աշխարհում: Այն որդեգրվել է մի շարք բողոքական եկեղեցիների ու կրոնական հարանվանությունների կողմից: Հարցն աստվածաբանական հիմնավորում ունի եւ առնչվում է հոգեւորականի՝ քահանայության դերի ու կոչման ճիշտ ընկալման եւ գիտակցման հետ: Քրիստոս՝ Սուրբ Երրորդության երկրորդ Անձը, Աստծո Որդին, մարդացել, մարմնացել, չարչարվել եւ պատարագվել է մարդկության մեղքերի փրկության համար, եւ հաստատել Հաղորդության խորհուրդը՝ Իր հիշատակի եւ Իր Մարմնին ու Արյանը հաղորդակից լինելու համար: Հոգեւորականը պատարագի ընթացքում խորհրդանշում է Քրիստոսին, ապա որպես քահանա՝ կատարում է հավիտենական քահանայապետ հաստատված Քրիստոսի հաղորդության խորհուրդը եւ դրան մասնակից դարձնում ժողովրդին: Հետեւաբար, միայն տղամարդը կարող է եկեղեցում եւ այլուր քահանայություն կատարել, քանի որ այդ ծառայությունը նրան է վստահված հենց Տիրոջից: Անշուշտ, քահանայի գործունեությունը եկեղեցական ծիսակատարություններով միայն սահմանափակվելը չէ: Ինչպես Հիսուս Ինքն էր ժողովրդի հետ շփվում եւ անդրադառնում նրանց կյանքին ու կենսակերպին, այնպես էլ հոգեւորականն է զբաղվում հավատացյալների ու ժողովրդի ընկերային հարցերով, որոնք մարդու կյանքի անբաժանելի մասն են եւ շատ հաճախ կարող են ազդել հավատացյալի ներաշխարհի վրա:

Օրհնությամբ՝ Տ. Մուշեղ աբեղա Բաբայան

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Փաստորեն Հայ եկեղեցին մերժում է կանանց քահանայության գաղափարը, եւ սրա հիմքում նրանց իրավունքները ոտնահարող որեւէ միտում կամ ստորադասման նշույլ անգամ չկա:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՀԱՐՑ. Խնդրում եմ ասեք՝ ինչ կարող եմ անել այն դեպքում, երբ ֆինանսական կազմակերպությունը կամավոր չի կատարում Հաշտարարի որոշումը:

Սերգեյ Մնացականյան (45 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Քաղաքացու հարցին ի պատասխան հայտնում ենք, որ եթե Հաշտարարը կայացրել է որոշում, եւ Դուք համաձայնել եք այդ որոշմանը, սակայն ֆինանսական կազմակերպությունը Հաշտարարի որոշմամբ սահմանված ժամկետում չի կատարել այն, ապա Դուք իրավունք ունեք Հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմում ներկայացնել դատարան:

Դիմում ներկայացնելու կարգը եւ ժամկետները սահմանվում են՝

«Ֆինանսական համակարգի հաշտարարի մասին» ՀՀ օրենքով (հոդված 15)

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքով (գլուխ 51 ՝հոդվածներ 341 345),

«Դատական ակտերի հարկադիր կատարման մասին» ՀՀ օրենքով (հոդվածներ 1, 2, 17, 18, 23):

Ֆինանսական համակարգի հաշտարար

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Նշենք, որ Դատարան դիմում ներկայացնելիս կարող եք առաջնորդվել Ֆինանսական համակարգի հաշտարարի գրասենյակի կողմից մշակված «Ֆինանսական համակարգի հաշտարարի որոշման հարկադիր կատարման համար կատարողական թերթ տալու դիմումի վերաբերյալ» ուղեցույցով:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ պաշտոնական լրահոսից

Ադրբեջանական լրատվամիջոցները հայտնում են, որ իրենց ՄԻՊ Սաբինա Ալիեւան այցելել է Բաքվի բանտերում պահվող հայ գերիներին:

Թեեւ լրատվամիջոցները գրում են, որ Ռուբեն Վարդանյանը հայտարարել է, թե նրանց նկատմամբ խոշտանգումներ տեղի չեն ունենում, սակայն երեկ հրապարակված լուսանկարներն այլ բանի մասին են վկայում:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	-9 - 12 -4 - 7
Կոտայքի լեռներ	-11 - 14 -5 - 7
Կոտայքի նախալեռներ	-6 - 10 -1 - 3
Գեղարքունիք	-12 - 17 -6 - 8
Լոռի	-10 - 15 -3 + 1
Տավուշ	-5 - 8 -2 + 2
Արագածոտնի լեռներ	-10 - 15 -6 - 10
Արագածոտնի նախալեռներ	-6 - 9 0 - 3

Արարատ	-4 - 7 0 + 2
Արմավիր	-6 - 9 0 + 3
Վայոց ձորի լեռներ	-15 - 20 -6 - 9
Վայոց ձորի նախալեռներ	-6 - 11 0 - 3
Սյունիքի հովիտներ	-5 - 9 0 - 4
Սյունիքի նախալեռներ	-12 - 17 -2 - 5
ԼՂՀ	-11 - 15 -2 - 4
Երեւան	-5 - 9 -4 - 4

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **4.3.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*